Արձանագրություն N 4
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

22.05. 2019թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ֆ. Կոստանդյան (ԲԱ), Մ. Սարգսյան (ԳԱ)
Տ. Պողոսյան (ԳԱ), Ա. Մխիթարյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

1. <<ԵՔ -ԲՄԱՇՁԲ-19/37> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ն. Մամուլյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 20.05.2019թ–ին տեղի է ունեցել հայտերի գնահատման նիստը, որի ժամանակ «Գրիգորյան Շին» ՍՊԸ–ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրված եզրակացությունում առկա է անհամապատասխանություն հրավերով սահմանված պայմանների նկատմամբ և նիստը կասեցվել է 20.05.2019թ-ին ոչ ավտոմատ ծանուցման վերոհիշյալ կազմակերպությանը ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում:

Մասնակցի կողմից gagik.huroyan@yerevan.am էլ.փոստ հասցեին ուղարկվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված 17.05.2019թ թիվ 877 տեղեկանքը և հարկային հաշվետվությունները, որում նշված է, որ 2019թ-ի հունվար, փետրվար, մարտ ամիսների ընթացքում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը այլ ոչ թե համախառը եկամուտը կազմել է 107048849 ՀՀ դրամ, որը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի՝ որոշեց մերժել «Գրիգորյան Շին» ՍՊԸ -ի հայտը,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37 >> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին

(Ն. Մամուլյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Էլդոգար» ՍՊԸ –ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ն. Մամուլյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ն. Մամուլյան)

6.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ն. Մամուլյան
Անդամներ՝		Ֆ. Կոստանդյան
		Մ. Սարգսյան
		Տ. Պողոսյան
		Ա. Մխիթարյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան